

կողերը , առջեր կուրծքի տախտակը . իսկ փորէն բաժնուած է սործանի կամ առաջասոր սրբի լրուած մկանով մը :

Ավ տեսնէք , սիրելի որդեակը , որ մարդուս մարմնոյն կազմութեանը ու գործարաններուն վրայ ձեզի տուած սեղեկութիւնս խիստ անկատարէ . յաջորդ դասերուն մէջ շատ անգամ հարկ կ'ըլլայ աս բաներս նորէն յիշել . ան ատենը հոս զանց ըրածներս ալ հոն կը բացատրեմ : Ի՞այց դուք աս մի մոռնաք որ Ի՞ստուած կը պահանջէ մեզմէ որ մեր մարմնոյն ամէն մասանցը մէջ ներդաշնակութիւն պահէնք . մեր մարմինը պատուական գործիք մըն է որ պիտի յարգենք ու անդադար կատարելագործենք , և բժիշկները այնպիսի ջանքով պիտի կանչուին մարդուս մարմնոյն առողջութիւնը հաստատելու , ինչ ջանքով որ քահանաները կը կանչուին հոգուոյն խաղաղութիւնը պահելու համար :

Ով իրեն կամ իր ծնողացը կեանքը կը կարծեցընէ պժգալի ագահութեամբ կամ դատապարտելի անհոգութեամբ մը , ըսել է թէ այնպիսին Ի՞ստուծոյ կամքը չճանչնար , անոր կարգաւորութեանը հակառակ կ'ելլէ և արժանի կ'ըլլայ ան պատիմներուն որ Ի՞ստուած իր արդարութեամբը պահեր է անոնց՝ որ իր սուրբ օրէնքները ոտքի տակ կ'առնեն :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՏՕՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Համակաչի գլուխուոր բաժանմանց և այլ և այլ աղջաց աօմարներուն վրայ ուղեկութիւն :

Տարի կ'ըսուի ժամանակին այն մասը որուն մէջ երկիրս ծրի խաւարման վրայ ամբողջ շրջան մը կը կատարէ :

Որովհետեւ հիները չեին կրնար այն-

պէս դիւրաւ իմանալ երկրիս ծրի խաւարման մէկ կէտէ մը ելլելով նոյն կէտը համնիլը , ինչպէս լուսնի կանոնաւոր երեսոյթները , անոր համար շատերը կը կարծեն թէ իւրաքանչիւր ազգ այլ և այլ տարի կը գործածէ եղեր : Դիոդորոս Անկիլիացի պատմիլը , Պինոնիոս , Պլուտալքոս և ուրիշները կ'ըսեն թէ հին ատեն Եգիպտացւոց տարին սկզբան մէկ լուսնական ամիս էր , Ետքէն երկու ամիս եղաւ , Ետքէն իրեք , Ետքէն չորս և վերջէն վեց լուսնական ամիս էր : Այս վկայութիւններէս առիթ առնելով ոմանք , մանաւանդ Առթէո , Եգիպտացւոց տարին այսպէս կարծ սեպեցին որպէս զի կարող ըլլան ուզածնուն պիտի կանչուին մարդուս մեկնել . բայց առանց մէկ հաստատուն հիմունք մ'ունենալու : Իոլորովին ծուռէ այս ենթագրութիւնը , վասն զի թէ որ ջրհեղեղէն առաջ Ովլսէսի ըսած տարիները մէջյմէկ ամիս ըլլային , ան ատեն Ի՞նովք , Ո՞աղաղայէլ , Կայէն եօթը տարուան չեղած տղայ ունեցած կ'ըլլան , յառաջ քան այրութեան հասակն առնելու , որ աւելի զարմանալի է քան թէ ինն հարիւր տարի ապրիլը : Ի՞այց ասկէց , Ո՞ովսէս ջրհեղեղէն առաջ ժամանակի ինչ բաժանմունք որ կը գործածէ , ջրհեղեղէն վերջն ալնոյնը կը գործածէ :

Դարձեալ՝ թէ որ ասոնց ըսածին պէս նահապետաց տարիները երկերկու ամիս ալ սեպելու ըլլանք , ըսել է թէ Փաղէկ , Ո՞երաք հինգ տարուան չեղած որդի ունեցեր են , և հազիւ թէ քսանըորս տարի ապրեր են , որով ըսել է թէ ասոնց կեանքը Ծքփաքսադայ , Յակովը ու մեր կեանքէն շատ կարծքերէ , ուր ընդհակառակն սուրբ գիրքը իբրև նոր քան կ'ըսէ թէ ասոնք առաջիններէն քիչ ապրեցան . և ընդհանուր ու շարունակ աւանդութիւն է ամենայն ազգաց մէջ թէ հիները մեզմէ շատ երկայն կ'ապրէին :

Ուրբ Դիոդորովի ջրհեղեղի պատմութենէն կ'իմացուի որ նոյն ատեն տարին

մերինին պէս տասուերկու ամիս է եղեր. վասն զի սուրբ գիրքը յայտնապէս կ'ըսէ թէ լոյ երբոր տապանը մտաւ 600 տարուան էր և 601 տարուան տապանին եղաւ. իսկ տապանին մէջ տասը ամիս և յիսունըցորս օր կեցաւ: Ուրեմն ըսել է թէ այն ատենները տարին հիմակուան պէտ տասուերկու ամիս կը բաժնուի եղեր, և վերջէն ալ լոյի սերնդոցը մէջ մնաց այս սովորութիւնն. վասն զի նոյն իսկ մեր հայկ նահապետը որ լոյայ թոռան թոռն էր՝ հայաստան որ գարձաւ այս սովորութիւնն ալ հետըբերաւ, և հայկական տօմար հաստատելով ինքը դրաւ մեր տասուերկու ամիսներուն անունները: Խակ օտար ազգաց մէջ, ինչպէս լորոդոսոս կը յիշատակէ, առաջինը լոգիալտացիք եղան որ տարին տասուերկու ամիս բաժնեցին 30ական օր, հինգ ալ վերջէն հերմէս աւելցուց: Լոյս կարծառօտ տեղեկութիւններս գնելէն ետե՛ անյնինք հիմայզանազան տարինները քննելու:

Տարին աստեղաբաշխական ու քաղաքական կը բաժնուի. առաջինը երկրիս ծրի խուարման վրայ առերեւոյթշարժման միջոցն է, որ ըստ դիտողութեան աստեղաբաշխից է իբր 365օր 5ժամ ու 49' միջական ժամանակ. իսկ երկրորդը՝ 365օր է առանց մանր մասունքներն հաշուելու, միայն չորս տարին մէյմը 366օր կ'ըլլայ, վասն զի այս մասունքները տարի տարուան վրայ աշելով չորս տարուան մէջ գրեթէ օր մը կ'ըլլան:

Արկրիս նկատմամբ ընդհանրապէս իրեք տեսակ տարի կայ:

ա. Լոյնադարքի կամ գիշերակատասարի տարի կ'ըսուի այն ժամանակը որ արեւի իր պարունակին վրայ կէտէ մը ելլելով նոյն կէտը համանելու համար կ'անցունէ. ինչպէս է օրինակի համար արեւադարձից կէտ մը. և այս ժամանակին երկայնութիւնն է միջական չափով 365օր 5ժ 58' 51'', 6.

բ. Լոյնական կամ պարբերական տարի կ'ըսուի այն ժամանակը որ արեւ երկնքին երեսը աստղէ մը հեռանալով

նորէն նոյն աստղին համանելու համար կ'անցընէ. ասոր ալ երկայնութիւնն է 365օր 6ժ 9' 11'', 6: Լոյիկայ առաջինէն քիչ մը երկայն է գիշերահաւասարից կայ կամ սպատական պատճառուաւ, որուն վրայ նախորնթաց թերթին մէջ խօսած ենք: գ. Պարականոն տարի կ'ըսուի այն ժամանակը որ արեւը ափսիդը կամ աղեղնակէտք ըստուած կէտերէն մէկուն վըրայէն ելլելով նոյն կէտը համանելու համար կ'անցընէ. ասոր երկայնութիւնն է 365օր 6ժ 13' 58'', 8: Լոյնպէս որ կը տեսնենք ասիկայ առաջիններէն քիչ մը երկայն է, վասն զի այս կէտերը հաստատուն չեն, այլ գանդաղ շարժում մ'ունին, տարին իբր 11'', 8. որովարեւը այս կէտերէն մէկուն վրայէն ելլելով ամբողջ աստեղական շրջան մը կատարելին ետև դեռ պէտք է 11'', 8 մասն աստիճանի ալ ընթանալ որ նոյն կէտն համար, այս ընթացքս գրեթէ 4' 47'', 2 մասն ժամու կը տեւէ, որ ըսել է թէ պարականոն շրջանը կամ աղեղնակիտից տարին աստեղական տարիէն 4' 47'', 2 երկայն է:

Լոյնցմէ զամ չորրորդ տեսակ տարի մըն ալ կայ որ զուգնեացական տարի կ'ըսուի. ասիկայ այն ժամանակն է որով երկիրս ու արեւը իրարու նկատմամբ նոյն դիրքը կ'առնուն. ինչպէս է այն ժամանակը որ երկիրս արեւուն զուգընթացութենէ մը կամ հանդիպակացութենէ մը ինչուան երկրորդ զուգընթացութիւնն է կ'անցընէ:

Լոյնական տարին լուսնի շարժմունք-

1. Աղշնակէն կ'ըսուին որ և է մոլորակի մը թէ. րաձև պարունակին մէծ առանցից երկու ծայրերը, կամ թէ պարունակի մը այն երկու կետերը որոնց վրայ մոլորակ մը արեւէն իր ծայրագոյն հեռաւորութիւնը կամ մերձաւորութիւնը կ'ունենայ: Եւրոպացիք այս կէտերուն յունական բառով ադիս կ'ըսեն որ աղշնակ է ու կը նշանաւ. կէ: Հեռաւորագոյն աղշնակէտը վէրին աւելի. կէպ կամ աղշնակէտ կ'ըսուի, մերձաւորագոյն աղշնակէտը ադրին աղշնակէտ կամ արեւունքը կ'ըսուի: Իսկ երկրիս նկատմամբ խօսելով լուսնի կամ արեւու զընաններուն այս կէտերը եւ էւալար ու եւ էւալիք կ'ըսուին: բայց սովորաբար տասնից ամենուն համար ալ հեռակէտ ու մեջակէտ կը գործածենք:

ներով կը կանոնաւորի , և կը բաժնուի աստեղաբաշխական ժաղաքական կամհկասարակ և գլուխալ կամհնական : | ուսնի աստեղաբաշխական տարին տառուերկու լուսնական ամիսներէ բաղկանալով , որոնց միջական չափն է 29° 12' 44' 2'' , 8 , արեւադարձի տարիէն զրեթէ 11 օր պակաս կ'ըլլայ , որով մէկ արեւադարձի տարին 12 լուսնական ամիս ու 11 օր կը բովանդակէ , և տարի կ'ըլլայ որ փոխանակ 12 նոր լուսնի 13 նոր լուսնին կ'ունենանք , որ ըսել է թէ արեւադարձի ամիսներուն մէկուն մէջ 2 լուսնի ծնունդն կ'ունենանք : Դիտողութեամբ իմացուեր է որ 19 արեւադարձի տարիէն ետև այս երկու լուսաւորացս փոփոխ ընթացքը կուգան կը միանան ու նորէն կը սկսին այլայիլ : | Հայս բանս անկէ ալ յայտնի է որ արեւուն տարեկան մէկ արեւադարձի ընթացքը , որ է 365° , 242264 միջական ժամանակ , թէ որ 19° բազմապատկենք՝ արտադրեալն է 6939° , 603016. նոյնպէս լուսնի ամսոյն միջական ընթացքը , որ է 29,530588 օր , թէ որ 235° բազմապատկենք , որ 19 տարուան մէջ լուսնի ընթացից գումարն է , արտադրեալն է 6939° , 688180 : | Այս կէ յայտնի կը տեսնենք որ 19 արեւադարձի տարուան մէջ 235 լուսնի շրջան կը կատարուի , և այս երկու շրջանին բոլոր տարբերութիւնը 0,085164 օրուան մասն է , որ հազիւ թէ ժամ ու կէս կ'ընէ :

| Հայս 19 արեւադարձի տարուան շրջանը ՈՒետոն աթենացին գտաւ Քըրիստոսէ իբր 433 տարի առաջ , և առ հասարակ բնականերէակ ըսուեցաւ : | Թենացիք այս երեւելի դիւտիս վրայ այնչափ զարմացան որ ոսկի գլխազրով մարմարինի վրայ գրած քաղաքին հրապարակը զրին , ասկէց է որ նաև ոսկեթիւ կ'ըսուի այս շրջանս :

| ուսնի քաղաքական կամ հասարակ տարին ալ 12 լուսնական ամիսներէ կը բաղկանայ առանց մասն մասունքներն պէ հաջուելու , և 354 օր է :

| ուսնի վերադրեալ կամ նահանջ

տարին 13 լուսնական ամիս է , անող համար ալ 384 օր է : | ակ 19 տարուան արեւու շրջանին մէջ լուսնի նահանջ տարիներն են՝ երրորդը , հինգերորդը , ութերորդը , մետասաներորդը , չորետասաներորդն ու եօթնետասաներորդը :

| Հայց այս ամենայն հաշիւներուն ձշութիւնը նոր աստեղաբաշխից անխոնջ աշխատութեանց ու դիտողութեանց պտուղն է , վասն զի հիները ոչ հիմակուան գործիքներն ունեին և ոչ չափական գիտութեանց կատարեալ տեղեկութիւնները , անոր համար անկարելի էր իրենց աստեղաբաշխական բարակ հաշիւներուն ձշութիւնը :

| Հայս համառօտ տեղեկութիւններս տալէն ետև կ'անդնինք այլ և այլ ազգաց տօմարներուն վրայ խօսելու յաջորդ թերթերուն մէջ :

Հ . Հ . Պ

Ա Բ Ա Կ

Ակր և Այս :

(Օ մը , կ'ըսէ Պրզատոն
Ըսն մեծանուն փիլիսոփայն՝
[թէ] Ուերն ու Ուահ ճամքէ եկան ,
Ուստիկ յոգնած տուն մը իջան
Ուէկէն փուուած 'ի քուն մըտան :
Ուերն արթընցաւ առտուն կանուխ ,
Հայց գեւ թմրած քունն 'ի զըլուխ .
Ուանց աղէկ մը նայելու
Ուահուան կապարձն առաւ զընաց :
Ուահն ալ առանց լաւ դիտելու
Երբ արթընցաւ ելաւ զընաց
Ուիրոյ կապարձն ուսը զարկած :
Տեսաւ ծերուկ մը հեռուէն ,
Եւետ մը քաշեց 'ի կապարձն ,
Ծակեց զարկաւ վիրաւորէց .
Ծերուն արիւնը ոտք հանեց .
Խեցքը թռուց , մազը սեցուց
Հին կրքերով սիրտն արթընցուց :
Ուերն ալ որչափ որ ազնիւ մարդ
Ուչափ տեսաւ երիտասարդ՝